

1.5. Բիզնես-ռեզիստր¹³

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 2 վիճակագրական աշխատանքները (150001-150002 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետում:

2004թ. պետական վիճակագրական աշխատանքների ծրագրով նախատեսված վարչական ռեզիստր հանդիսացող պետական կառավարման մարմիններից (ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեզիստրի գործակալությունից, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առնթեր հարկային պետական ծառայությունից) սահմանված կարգով ստացվել են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ տվյալներ: Վերոհիշյալ մարմիններից ստացված տվյալները ճշգրտվել, համադրվել, ստանդարտացվել և վերլուծվել են բիզնես ռեզիստրի արդիականացման նպատակով:

Բիզնես ռեզիստրի ձևավորման և արդիականացման նպատակով ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններից, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումներից ստացվել, համադրվել և ամփոփվել են իրենց վիճակագրական մոնիտորինգում առկա առևտրային իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի բազաները:

2004թ. իրականացվել է 10106 առևտրային իրավաբանական անձանց և 1249 անհատ ձեռնարկատերերի 2003թ. տնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության (գտնվելու վայրի, գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակների, աշխատողների թվաքանակի, ինչպես նաև գործելու կամ չգործելու վերաբերյալ տվյալներ) արդիականացումը:

2004թ. ընթացքում իրականացվել է հետազոտություն 9300 առևտրային իրավաբանական անձանց 2003թ. տնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ստացման և բիզնես ռեզիստրի ամբողջական ձևավորման նպատակով: Հետազոտության արդյունքում մարզային գործակալություններից հավաքագրված տեղեկատվությունը (հարցաթերթեր) ստուգվել, կորավորվել, մուտքագրվել, վերլուծվել և ամփոփվել է: Հրապարակվել է համապատասխան զեկույց կատարված աշխատանքների վերաբերյալ:

¹³ Տես՝ Ծրագիր, Հավելված I: